ՔԱՂԱՔԱՅԻՆ ՖՈԼԿԼՈՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱԿՈԲ ԱՆԱՆԻԿՅԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

ԱՐԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղ

Համառոտ

Ներկայացվող հոդվածը մեր՝ հայրենի տարածաշրջանի արվեստագետների մասին պատմող շարքի հատվածներից մեկն է, շարք, որն ունի շարունակական բնույթ և դեռևս հեռու է ամբողջանալուց: Այն նվիրված է նշանավոր գեղանկարիչ Հակոբ Անանիկյանի առավել մնայուն կտավներին՝ 60-ական թվականների ստեղծագործությանը, որտեղ հիմնականում Ալեքսանդրապոլն է՝ իր անկրկնելի բարքերով ու պատվախնդիր, հաճախ էլ՝ ֆոլկլորային դեմքերով:

Բանալի բառեր. *Ալեքսանդրապոլ-Լենինական, երկրագիտական թանգարան, արհեստավորներ, Պոլոզ Մուկուչ, ավանդույթներ, գյումրեցի, Ծիտրո Ալեք, վարպետի կերպար, անհատական ցուցահանդես, Մերկուրովի անվան նկարչական դպրոց:*

Հակոբ Անանիկյանին համարում են Ալեքսանդրապոլ-Լենինականի նվիրյալ նկարիչը, ով իր ստեղծագործություններում վերապրել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի քաղաքի բարքերն ու նրա մարդկանց ճակատագրերը: Պատահականությո՞ւն էր արդյոք այն հանգամանքը, որ իր կյանքի թեմային նկարիչն անդրադարձավ 1966 թվականին, երբ, թողնելով իր ծննդավայրը՝ Լենինականը, բնակություն հաստատեց Երևանում: Կարծում ենք՝ դա օրինաչափ էր ու տրամաբանական. չէ՞ որ տարիներ էին հարկավոր, որպեսզի Անանիկյանը ամբարեր, կուտակեր քաղաքի պատմությունն ու ավանդույթները, յուրացներ մարդկային բնավորություններն ու տեսակները, հոգեկերտվածքն ու անկրկնելի նկարագիրը, և միայն սիրելի քաղաքի հեռավորությունն ու կարոտը նրան համարձակություն տվեցին դառնալու հարազատ քաղաքի նվիրյալ նկարիչը: Արդեն հետևում թողել էր Թերլեմեզյանի գեղարվեստի ուսումնարանը (1939 թ.), դեկորատիվ-կիրառական արվեստի ինստիտուտը Մոսկվայում, Գեղարվեստաթատերական ինստիտուտը (հեռակա կարգով), որոնք էլ Անանիկյանին թույլ տվեցին վարպետանալու իր գործում ու վերադառնալով հայրենի քաղաք՝ ծառայելու նրան գիտելիքներով ու փորձով:

1951-1966 թթ. Անանիկյանը հիմնադրել ու ղեկավարել է Լենինականի երկրագիտական թանգարանը: Ընկերները հետագայում հիշելու են, թե ինչ սիրով էր Անանիկյանը շրջում տոհմիկ արհեստավորների տներով՝ ժողովրդական արհեստների գործիքներ ձեռք բերելու համար[1]: Նա այնպիսի մանրամասնությամբ էր թվարկում այս կամ այն արհեստի՝ անգամ աննշան թվացող մանրուքները, որ իրենք՝ արհեստավորները, մնում էին ապշած[2]:

1996 թ. Հայաստանի ազգային պատկերասրահում կայացած ցուցահանդեսի հրավիրատոմսում գրված է. «*1960-ականներին, ամեն անգամ Լենինական գնալիս, մեքենայից հագիվ իջած, մտնում էինք Ամենափրկիչ եկեղեցի, որտեղ գտնվում էր երկրագիտական թանգարանը, որի տնօրենն էր Հակոբ Անանիկյանը: Նկարիչը զրույցը սկսում էր արվեստով: Ոգևորված ցույց էր տալիս իր հավաքած հին կենցաղի իրերը, պատմում դրանց կենսագրություն-պատմությունը: Հետո, եկեղեցուն հարող փողոցով այցելում էինք արհեստավորներին, որոնց հետ խոսելիս մեր ուղեկիցը դիմում էր վարպետական մականուններով: Փողոցներով անցնելիս լսում էինք այս կամ այն քարաշեն գեղեցիկ շինության պատմությունը: Անանիկյանը պատմում էր այնպիսի ոգևորությամբ, որ կարծես այդ ամենը իր սեփական տան պատմությունը լիներ: Իսկ երեկոյան, տանը՝ իր կրաքների առջև, ակամա ցանկություն էր ծնվում ցերեկվա լսածների կերպարանավորումները տեսնել: Բայց…*»[3]:

Բայց ամեն ինչ սկսվեց 1966 թվականից, երբ Անանիկյանն ընտանիքով տեղափոխվեց Երևան: Հարկավոր էր թողնել հայրենի քաղաքը, որպեսզի նոր ուժով հայտնաբերեր այն իր մեջ, հուշերի ու մանկությունից եկող տեսիլների մեջ: Անանիկյանը գտավ ոչ միայն Գյումրին, այլ նաև հենց իրեն, իր անհատականությունը՝ հարազատ «աշխարհի մեջ»[4]:

Միջին չափերի, հաճախ փոքրադիր կտավների վրա յուղաներկով կատարված աշխատանքների հերոսները Ալեքսանդրապոլի բնակիչներն են՝ առաջին հայացքից ոչնչով աչքի չընկնող, իրենց առօրյա

1 Յուր. Խաչատրյան, «Գյումրի քաղաքի նկարիչը», Գրական թերթ, 1977, ապրիլի 29, էջ 4

2 Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Ճանգակ-97, 2009, էջ 420-23:

3 Հ. Իգիթյան, Հովնաթանյանից Մինաս, Երեւան, Տիգրան Մեծ-2001, 2001, էջ 259-267:

4 Ա. Մարգարյան, Շիրակ աշխարհի ստեղծագործողներ, Երևան, 2016:

գործերով զբաղված աշխատավոր մարդիկ՝ արհեստավորական կամ առևտրական դասից՝ պայտարներ, հացթուխներ, կոշկակարներ, շինարարներ, կառապաններ, ժողովրդական պատումների հերոսներ և այլք: Սակայն ուշադիր դիտելիս դրանցում գտնում ենք քաղաքային մշակույթի, ֆոլկլորի մի ամբողջ շերտ, որին հայ նորագույն գրականության մեջ անդրադարձել է Մկրտիչ Արմենը ոչ միայն իր «Հեղնար աղբյուր» վիպակում: Դա վարպետաց քաղաք Գյումրին է՝ իր մշակութային արժեհամակարգով, բառ ու բանով, կենցաղավարությամբ, ներքին անցուդարձով ու արտաքին դրսևորումներով… Հերոսները որքան իրական են, նույնքան էլ ընդհանրական ու պայմանական: Լուսավորության միջոցով նկարիչը շեշտադրումներ է կատարում՝ընդգծելով կամ սքողելով բնավորությունն ու կերպարի առանձնահատկությունները: Նկարիչն ասես դիտում է քաղաքը իր հերոսների ճակատագրերի պրիզմայով: Նա ամեն անգամ մտովի վերադառնում է երազներում տեսած Գյումրուն, մարդկանց ու կերպարներին, որոնք միաժամանակ և՛ հստակ են, և՛ վերացարկված:

Ահա նստած է «Հացթուխ Սիմոնը»: Նրա դեմքը մտախոհ է ու հոգսաշատ: Այստեղ կոլորիտը լուծված է ցորենագույնի, դեղինի ու շագանակագույնի երանգներով, ինչն ընդգծում է թոնրատան գաղափարը, հացթուխի մասնագիտությունը (նկ. 1):

«Պոլոզ Մուկուչը» (գուն. պտկ. 4), որտեղ հերոսը՝ Գյումրվա սև արխալուղով, արծաթե գոտիով ու փայլեցված երկարաճիտ կոշիկներով, հանդիսավոր դիրքով նստած է աթոռին՝ գինու բաժակը ձեռքին, գինու տակառների ֆոնին: Հերոսի սևազգեստ ֆիգուրը դիտողի ողջ ուշադրությունը սուբլիմավորում է նրա կերպարին՝ ընդգծելով ամեն մի մանրուք: Նրա դեմքը փոքր-ինչ լարված է. ասես խորհում է իր հերթական կատակի, սրամիտ խոսքի վրա: Անանիկյանը Պոլոզ Մուկուչին պատկերել է թեև արհեստավորի լակոնիկ տարազով, սակայն մտավորականի դեմքով ու կեցվածքով. չէ՞ որ սրամիտ խոսքն ու դիպուկ արտահայտությունը ծնունդ են առնում խելոք ու սրամիտ մարդու գլխում: Այդ է պատճառը, որ Անանիկյանն իր հերոսին վեր է հանում անեկդոտային ժանրից ու դիտարկում է նախ և առաջ իբրև խելացի, սարկաստիկ մտածողությամբ օժտված վառ անհատականության, ով իրավամբ համարվում է Գյումրու հոգևոր խորհուրդներից մեկը:

Անանիկյանը ներկայացնում է իր սիրելի քաղաքը մարդկային տարբեր կերպարներով, որոնցից յուրաքանչյուրն ընդհանուր տոնայնության մեջ բերում է իր բնավորությունը, իր տեսակի պատմությունը, ճակատագիրը, իսկ ամբողջությունից ծնվում է Գյումրու մեղեդին: Անանիկյանի պատկերած քաղաքին ջերմացնում ու հուզականություն են հաղորդում նրա կանացի կերպարները. մայրը՝ միշտ պատրաստ օգնության հասնելու, բարի և հոգնած տատիկները («բաջիներ»), կարեկից հարևանուհիները, խոնարհ հարսները: «Տիկին Սրբուհին» (նկ. 2) հավաքական կերպար է: Դիմագծերը մորն են հիշեցրել, սակայն վերջնական պատկերում տարբերվել է նրանից: Անցյալի հեռուներում նկարիչը տեսել էր նորանոր հարազատ դեմքեր, երբ հարցրել են՝ ում է պատկերել, ենթագիտակցորեն պատասխանել է՝ սրբուհու: «Տիկին Սրբուհին» դարձավ կանացի պատկերաշարի առաջին ստեղծագործությունը: Մեկը մյուսին հաջորդած՝ «Ապարանջաններով կինը», «Հարսը», «Տիկին Վարսիկը», «Մտորումներ», «Գյումրու տիրամայրը», «Դերձակուհի Ֆլորը», «Հարսն ու սկեսուրը», «Այրին», «Կինը երեխայի հետ», բացահայտում են կանացի կերպարների խորհրդավոր աշխարհը: Չէ՞ որ գյումրեցի կնոջ համեստությունն ու աշխատասիրությունն էին ընտանիքի հաջողության ու բարգավաճման առհավատչյան:

Ահա մեկ այլ գյումրեցի հերոս՝ Ծիտրո Ալեքը, որին նկարիչը պատկերել է հիվանդ վիճակում, անկողնուն գամված, երբ արդեն լքել են կենսական ուժերը: Կողքին նստած է հավատարիմ կինը: Իրողությունը տեղի է ունենում փոքրիկ սենյակում: Համեստ մահճակալի, մուգ աթոռի, պղնձյա կաթսայի միջոցով ձևավորվում է այն տարածքը, որտեղ ծավալվում է դրաման: Նկարիչն ընդգծել է միայն Ծիտրոյի դեմքն ու ձեռքը: Կոպիտ, առնական դիմակի քողի տակ, որ սովոր է միշտ փնթփնթալ ու վիրավորել, նկարիչը ներկայացնում է զգայուն ու չհասկացված մարդու: Նա բացահայտում է նրա էությունը, ցույց տալիս իրական դեմքը, որը տարբեր է ընդունվածից ու իմացածից: Ծիտրոն ասես վերհիշում է իր կյանքը և հրաժեշտ տալիս հեռանալուց առաջ: Կյանքն ու մահը կռիվ են տալիս նրա մարմնում: Կանաչի ու շագանակագույնի մուգ երանգներն ու հարաբերությունները խորացնում են նկարի դրամատիզմը:

«Ընկերոջ գերեզմանի մոտ» կտավը ասես շարունակում է նախորդ նկարը: Այն ունի ողբերգական հնչերանգներ: Գյումրեցին

գլխաբաց նստած է ընկերոջ գերեզմանի մոտ: Նա անօգնական իջեցրել է ձեռքերն ու գլխիկոր նստել՝ վերհիշելով լավ ու վատ օրերը, երիտասարդությունը, այն ամենը, ինչ կապված էր ընկերոջ ու նրա հիշատակի հետ: Եվ հիմա նա մնացել է մենակ. չկա ընկերը, որ վերցնի գավաթն ու կենաց խմի, վեճի բռնվի, կիսվի իր հետ: Նա մնացել է կիսատ ու անպաշտպան՝ անողոք ժամանակի նկատմամբ: Դեղին ու շագանակագույն երանգների հետ սպիտակի համադրությունն ընդգծում է գյումրեցու գլուխը, ձեռքերը, թաշկինակը՝ շեշտելով նրա հուսահատությունն ու անզորությունը:

Սակայն սխալ կլինի Անանիկյանի Գյումրին դիտարկել միմիայն գորշ գույներով ու դրամատիկ հնչերանգներով: Ահա նստած են ուտող-խմող, քեֆ անող գյումրեցի երաժիշտներն ու Վարպետը (նկ. 3): Քեֆ անելն ու երաժշտություն ունկնդրելը Գյումրվա մշակույթի անբաժանելի մասն են կազմել: Էպիկուրյան կերպարների կլոր մարմնամասերն ու գունեղ շապիկները նկարին հաղորդում են կենսահաստատ գոյի զգացողություն, իսկ կոմպոզիցիոն շրջանաձև կառուցվածքը այն դարձնում է դինամիկ:

Ենթագիտակցորեն զգալով հարազատ քաղաքի դիմագծի ու նկարագրի արժեզրկումը, այն, որ իր իմացած ու սիրած քաղաքը անճանաչելիորեն փոխվելու է, նկարիչը յուրօրինակ հրաժեշտ է տալիս քաղաքին ու նրա մարդկանց՝ «Հեռացող Գյումրի» (նկ. 4) կտավով: Մուգ աղբյուրի և տան ֆոնին դեպի լույս է գնում գյումրեցին: Նա Վարպետի հավաքական կերպարն է: Դեմքը չի երևում, բայց կորացած ուսերն ու հոգնած քայլվածքն ավելի քան խոսուն են ու արտահայտիչ: Ձեռքի փոքրիկ կապոցն այն ամենն է, ինչը նրան կապում է այս աշխարհի հետ: Նա գնում է մի ուրիշ, ավելի լուսավոր աշխարհ: Նկարը կառուցված է դեղին և գորշ գույների համադրությամբ, բայց զարմանալի զգացված է ու արտահայտիչ: Այն արժանի վերջակետ է. հրաժեշտ է ու պատգամ:

Վերջին տարիներին նկարիչը հասել էր մասնագիտական նոր որակների: Նրա՝ առաջին հայացքից պարզ թվացող կոմպոզիցիաները լակոնիկ են, խտացված, պինդ քսվածքներով: Փոքր մակերեսի վրա նրան հաջողվում է խտացնել կարևոր միտք, ասելիք. դրանք կարելի է բնութագրել իբրև «մեծը՝ փոքրի մեջ»: Առաջնային տեղ է հատկացվում լույսին. այն կամ փափուկ ողողում է կտավի մակերեսը, կամ հստակ ընդգծում հերոսի դեմքը, ձեռքերը կամ որևէ առարկա՝ շեշտադրելով նկարչի ասելիքը:

Անանիկյանն աշխատում էր հափշտակված ու առանց ընդմիջումների: Արդեն 1976 թ. գյումրեցիներին նվիրված շարքը ավարտուն տեսք ուներ, ու նկարիչը անհատական ցուցահանդեսի առաջարկություն է ստանում: Սակայն նա չէր շտապում, քանի որ իր ուսերին զգում էր մեծ պատասխանատվություն: Դատարկ շրջանակների հետնամասում նշում էր ապագա նկարի անվանումը, ստեղծվելու տարեթիվը, այն է՝ 1976 թ., որն էլ ելակետ էր ընդունում գալիք ցուցահանդեսի համար: Այդ անվանումները գրում էր ապագա ցուցահանդեսի համար ընտրված նկարների ցուցակում[4]: Անհատական ցուցահանդեսը կայացավ 1979 թ.՝ հետմահու: Նկարիչն այդպես էլ չտեսավ իր մեծ աշխատանքի վերջնարդյունքը, աշխատանք, որ տարիներ շարունակ հասունացել էր իր սրտում:

Անանիկյանը ոչ միայն հրաշալի արվեստագետ, այլև նույնքան հմուտ մանկավարժ էր: Դասավանդելով Լենինականի Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցում՝ նկարչություն է սովորեցրել Մինաս Ավետիսյանին, Էդուարդ Արծրունյանին, Աշոտ Հովհաննիսյանին, Աշոտ Մելքոնյանին և այլոց: Իրավամբ, Հակոբ Անանիկյանին կարելի է համարել Գյումրու նկարչական դպրոցի հիմնադիրը:

SUMMARY

The disclosure of urban folk in Hakob Ananikyan's painting

Arax Margaryan
Gyumri department of SAFA of Armenian ,
the branch of History and Theory of art
awarded the degree of Doctor of Arts

The submitted article is one of a number of stories about people of art in their native region, a story which is yet to be continued and is far from being completed. It is devoted to the most famous paintings by Hakob Ananikyan from the 60-th. The major point of the paintings is Alexandropol with its habits, noble and sometimes folkloric faces.

Key-words: *Alexandropol-Leninakan, local history museum, artificers, Poloz-Mukuch, habits, a man from Gyumri, Tsitro Alek, character of a master, personal exhibition, art school after Merkurov.*

РЕЗЮМЕ

Отражение городского фольклора в творчестве Акопа Ананикяна

Араксия Маргарян
Зав.кафедрой искусствоведения и гуманитарных наук
Гюмрийского отделения ГАХА
Доцент, кандидат искусствоведения

Представленная нами статья является продолжением цикла статей о художниках региона, - работа, которая пока далека до завершения. Она посвящена наиболее известным полотнам выдающегося художника Акопа Ананикяна, его творческому наследию 60-х годов, в котором ключевое место занимает Александрополь со своими традициями и достижениями, а также фольклорными персонажами.

Ключевые слова: Александрополь-Ленинакан, краеведческий музей, ремесленники, Полоз Мукуч, традиции, гюмриец, Цитро Алек, образ мастера, индивидуальная выставка, художественная школа им. Меркурова.







1. Հակոբ Անանիկյան. Հացթուխ Սիմոնը
2. Հակոբ Անանիկյան. Տիկին Սրբուհին
3. Հակոբ Անանիկյան. Երաժիշտներ
4. Հակոբ Անանիկյան. Հեռացող Գյումրի